Մրցույթի հայտարարություն

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կուտական գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կուտական գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.
2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կուտական գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թ. մայիսի 23-ից մինչև 2022թ. հունիսի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 -ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունիսի 24-ին՝ ժամը 13:00-ին «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կուտական գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ. Կուտական, 3-րդ փ., տ. 3:

Տեղեկությունների համար դիմել՝

1. Կարապետյան Սաթենիկ, հեռ. 094697083, էլ–փոստ xachatryan.satenik84@gmail.com
2. Հունանյան Անի, հեռ. 094678730, էլ–փոստ hunanyanani-2@aspu.am

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Կուտական գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կառավարման խորհուրդ